ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

« 02 » 10 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000690

Ձեռնարկողը՝ ***«Բասիս Գրուպ» ՍՊԸ***
ք. Երևան, Իսրայել Օրու փողոց 24

Գործունեությունը՝ ***Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ռաֆֆու փողոց 28 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
քաղաք Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Թարգյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000680

<< 02 >> 10 2020թ.

Երևան քաղաքի Մալաթիա Սեբաստիա վարչական շրջանի Ռաֆֆու փողոցի 28 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս

Ձեռնարկող՝	«Բասիս Գրուպ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Նախնական գնահատման հայտ Գ կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Երևան համայնք, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան

Ըստ նախագծի բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցումը «Բասիս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է իրականացնել Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ռաֆֆու փողոցի 28 հասցեում:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը կառուցվելու է անշարժ գույքի սեփականության իրավունք ունեցող 7631մ² ընդհանուր մակերեսով հողամասում՝ Երևանի քաղաքապետարանի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա:

Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, իսկ գործառնականը՝ հասարակական կառուցապատման: Գործունեության նպատակը բնակելի շենքի կառուցումն է:

Նախատեսվող գործունեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի ա) ենթակետի հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս.

Գործունեության ենթակա տարածքը գտնվում է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի հարավ-արևմտյան մասում, Ռաֆֆու, Սվաճյան և Գուսան Շերամի փողոցների միջանկյալ հատվածում՝ ավտոտեխսպասարկման կայանի և այգու հարևանությամբ: Ամենամոտ բնակելի տարածքը գտնվում է նախագծված տարածքից մոտ 25մ հեռավորության վրա: 300մ հեռավորության վրա գտնվում է 90-ական թվականներին կառուցված Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցին: Տարածքը կառուցապատումից ազատ է, քանդման ենթակա շենք-շինություններ չկան: Տարածքում առկա ժամանակավոր շինությունը հանդիսացող վագոն-տնակը, ինչպես նաև քարե պարիսպը պետք է ապամոնտաժվեն:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում նախագծվող կառույցի վրա՝ բացակայում են: Տեղամասում մինչև 39 մետր խորությամբ փորված հորատանցքներով ստորերկրյա ջրեր չեն բացահայտվել և ըստ արխիվային նյութերի հրաբխային սարահարթի սահմաններում դրանք գտնվում են 60 մետրից խորը հորիզոններում:

Ներկայացվող տարածքում հողային ծածկույթը նախկինում տեխնածին ազդեցությունների հետևանքով արդեն իսկ խախտված է: Կառուցապատվող տարածքում տարածված են կիսաանապատային գորշ, խճաքարային տեղ-տեղ կարբոնատային լիցքային գրունտների ձևով հողերը, որտեղ բուսածածկը և հողածածկը գրեթե բացակայում են և շինարարության ընթացքում հնարավոր չէ բուսաշերտը հանել և պահեստավորել: Ուսումնասիրվող տարածքը չի առնչվում Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում գոյություն ունեցող մշակութային հուշարձանների, պահպանության ենթակա տարածքների կամ կենսաբազմազանության տեսակների հետ:

Շինարարության թույլտվության տրամադրման օրվանից սկսած շինարարական աշխատանքները տևելու են 4 տարի կամ 48 ամիս՝ որից 3 ամիսը նախապատրաստական փուլն է: Շինարարական աշխատանքների ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ՝ բուլդոզեր, էքսկավատոր, աշտարակային վերամբարձ կռունկ, ավտոկռունկ, շարժական բետոնախառնիչ, ավտոբետոնախառնիչ, կոմպրեսորային կայան, եռակցման ապարատ և այլն: Նախատեսվող գործունեության շինարարական աշխատանքների կատարման ժամանակ օգտագործվելու են շինանյութեր՝ երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնե կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն: Շինարարության համար անհրաժեշտ շաղախը և բետոնը բերվելու են պատրաստի վիճակում մասնագիտացված տրանսպորտային միջոցներով՝ ավտոբետոնախառնիչներով և շաղախատարներով:

Շինարարական հրապարակում չի նախատեսվում շինանյութերի, կամ սորուն նյութերի պահեստներ: Շինարարական աշխատանքների ընթացքում հանվելու է 65000մ^3 ծավալով հողային զանգված, որից 5000մ^3-ը օգտագործվելու է հետլիցքի նպատակով, իսկ 60000մ^3-ը տեղափոխվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր: Շինարարական աշխատանքների ընթացքում առաջանալու է 500մ^3 շինարարական աղբ: Շինարարության ընթացքում առաջացած շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր, իսկ կենցաղային աղբը տեղափոխվելու է Երևան քաղաքը սպասարկող աղբահավաք ծառայության կողմից: Գործունեության ընթացքում կենցաղային աղբը կհավաքվի դրանց համար նախատեսված աղբամաններում և կանոնավոր կերպով կհեռացվի շինարարական հրապարակից: Շին աշխատանքների ընթացքում առաջացած երկրորդային օգտագործման համար պիտանի նյութերը (հիմնականում մետաղի ջարդոններ և փայտանյութ) կտեսակավորվեն և կպահվեն հրապարակում նախատեսված վայրերում՝ կազմակերպության կողմից հետագա օգտագործման նպատակով:

Շինարարության ընթացքում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների, հողի (գրունտի) ջրցանի, շինանձնակազմի խմելու և կենցաղային կարիքների համար: Ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որպեսզի չառաջանան մակերևութային հոսքեր, այլ ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար: Տարածքի մակերևութային ջրերի

հեռացումը կատարվում է կազմակերպված եղանակով՝ հեղեղատար կոյուղու համակարգի միջոցով:

Կառուցապատման մակերեսը կազմելու է 3120.0մ² (60%) ներառյալ՝ սալվածքներ, ճանապարհներ, անջրանցիկ մակերեսներ: Համաձայն կառուցապատման նախագծի բազմաֆունկցիոնալ համալիրը նախագծվել է երեք ստորգետնյա և 7-18 վերգետնյա հարկերով մասնաշենքերի համար: Համալիրը կազմված է 6 մասնաշենքերից /որոնցից մեկը ստորգետնյա է/ և միմիանցից բաժանված են դեֆորմացիոն կարերով: Ամբողջ տարածքի ստորգետնյա 3 հարկերում նախատեսված են ավտոկայանատեղեր (378 մեքենայի համար) և տեխնիկական տարածքներ, որոնց մուտքն ու ելքը ապահովվելու է թեքուղու միջոցով: Նախատեսված է նաև բացօթյա ավտոկայանատեղի: Շենքերի տանիքները լինելու են հարթ, իսկ ճակատները երեսապատվելու են տրավերտինե, տուֆե և բազալտե սալերի համադրությամբ: Ընդհանուր բակը բարեկարգվելու է կանաչապատ գոտիով, մայթերով, ճանապարհով, խաղահրապարակով:

Բնակելի համալիրն ապահովված է լինելու սառը ջրամատակարարման, կենցաղային կոյուղու և ներքին հակահրդեհային համակարգերով: Ջրամիացումը և ջրահեռացումն իրականացվելու է <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ կողմից տրվող Ջրամիացման և ջրահեռացման նախագծման տեխնիկական պայմաններին համապատասխան՝ Ռաֆֆու փողոցով անցնող 500մմ տրամագծի ջրագծից՝ 80մմ տրամագծով խողովակի միացմամբ: Կոյուղու միացումն իրականացվելու է հարևանությամբ առկա գազալցակայանի ետնամասով անցնող 1200մմ տրամագծի կոյուղու կոլեկտորին՝ 200մմ տրամագծով խողովակի միացմամբ:

Բնակելի համալիրի գազամատակարարումը կատարվելու է <<Գազպրոմ Արմենիա>> ՓԲԸ կողմից տրված տեխնիկական պայմանի համաձայն:

Ջեռուցումը և տաք ջրամատակարարումը բնակարաններում և տարածքներում իրականացվելու են անհատական կաթսաների միջոցով:

Շինարարության ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի բարեկարգում, ծառատունկ և կանաչապատում, որի համար կօգտագործվեն բացառապես տեղանքին բնորոշ, Երևանյան լանդշաֆտին համապատասխան բուսատեսակներ և ծառատեսակներ: Նախագծով նախատեսված կանաչապատումը ներառում է՝ սիզամարգի տեսքով աշխատանքներ, ծաղկասածիլ, ծառատունկ:

Կանաչապատման ընհանուր մակերեսը կազմելու է 3050.0մ² (40% և ավելին): Կանաչապատումն իրականացվելու է Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված կանաչապատման նախագծին համապատասխան: Համաձայն կանաչապատման նախագծի (դենդրոնախագիծ) տարածքում տնկվելու են՝ Թույա սյունաձև 26 հատ, թույա ոսկեգույն 14 հատ, գնդաձև ակացիա 17 հատ, հացենի 4 հատ, հուդայածառ 3 հատ, փռվող գիհի 27 հատ, մշտադալար սամշիտ 34 հատ, սիրիական վարդ 16 հատ, ծաղկասածիլ 2610 հատ, սիզամարգի սերմ 73կգ:

Կանաչապատման համար անհրաժեշտ բուսահողի ձեռքբերումը, տեղափոխումը և օգտագործումն իրականացվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության պահանջներին համապատասխան:

Ոռոգումն իրականացվելու է տարածքի համար նախագծվող ոռոգման ցանցի միջոցով: Նախագծված ոռոգման ցանցը, որը կունենա 200մ երկարություն, կմիանա տարածքի հարևանությամբ անցնող ոռոգման համակարգին՝ կնքվելիք պայմանագրին համաձայն:

Նախատեսվող գործունեության կատարման ժամանակ լինելու են շրջակա միջավայրի վրա ազդեցություններ, որոնք հիմնականում կապված կլինեն քանդման, փորման, բեռնման, հողային ու բետոնային աշխատանքների, հողային զանգվածների և թափոնների

ՀՀ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
ЭКСПЕРТНАЯ КОМИССИЯ
EXPERT COMMISSION OF EXPERTS
ՀՀ ԵՐԵՎԱՆ * РА ЕРЕВАН * RA YEREVAN

տեղափոխման, նյութերի օգտագործման, շինարարական տեխնիկայի ու մեխանիզմների շահագործման, ճանապարհների ծանրաբեռնվածության, արտակարգ իրավիճակների առաջացման հետ:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի ու արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում, այդ թվում՝

- շինարարական աշխատանքների /փոշեառաջացման աշխատանքներ/ ընթացքում ջրցանել,
- սորուն նյութերի ժամանակավոր կուտակումները և շինհրապարակը ծածկել համապատասխան բարձրության թաղանթով, կամ հատուկ ցանցերով՝ փոշու տարածումը կանխարգելելու համար,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և ապահովել կարգաբերումը:
- գրունտի և սորուն նյութերի տեղափոխումն իրականացնել բեռնատար տրանսպորտային միջոցներով՝ ծածկված թափքերով,
- խուսափել անորակ վառելիքի օգտագործումից,
- օգտագործել փոշու տարածումը կանխող ցանցեր,
- շինարարական աշխատանքների համար օգտագործել տեխնիկական որակի ջուր՝ տարածքում առկա ոռոգման ջրացանցից,
- ջրցանի ծավալները հաշվարկել այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- տարածքի հոսքաջրերը միավորել մեկ բակային ցանցում և միացնել գոյություն ունեցող հեղեղատար ցանցին:
- շինարարական նյութերի և քսայուղերի ժամանակավոր պահեստները տեղադրել բետոնապատ մակերեսի վրա, որոնք ապահովված կլինի հոսակորուստների հավաքման համակարգով,
- քսայուղերի, հեղուկ վառելիքի հնարավոր մնացորդային քանակների առաջացման դեպքում վերջիններս պահել հատուկ անթափանց, փակ տարաներում՝ հետագայում որպես երկրորդային նյութ վերաօգտագործել շինարարական այլ աշխատանքներում կամ հանձնել վերամշակող կազմակերպություններին,
- աշխատանքների ավարտից հետո տարածքը բարեկարգել, վերականգնել և մաքրել առաջացած թափոնները՝ տեղափոխելով Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր,
- շինհրապարակում բացառել թափոնների ժամանակավոր կուտակումները և տեղափոխել հատկացված վայրեր՝ համայնքի ղեկավարի կամ աղբավայրը շահագործողների հետ նախապես կնքված պայմանագրերի համաձայն,
- վտանգավոր թափոնների հանձնումն այն ընկերություններին, որոնք ունեն վտանգավոր նյութերի վնասազերծման կամ տեղակայման արտոնագիր,
- շինանյութերի ձեռք բերում՝ միայն լիցենզավորված մատակարարներից
-շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին,

02543163
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

- խուսափել աղմկահարույց մեքենաների ու սարքավորումների օգտագործումից և պարտադիր ապահովել համապատասխան խլացուցիչներով:

Բնապահպանական կառավարման պլանում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով իրականացնել կանոնավոր մոնիթորինգ, որի համար նախատեսված ծախսերը տարեկան կկազմեն 50.000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. համաձայն նախնական հայտի, բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության ու նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ: Հայտով նախատեսված միջոցառումների կատարման արդյունքում կնվազեցվեն շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները: Հայտը լրամշակվել է նաև տրված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են կրթության գիտության մշակույթի և սպորտի նախարարությունը, առողջապահության նախարարությունը, քաղաքաշինության կոմիտեն, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքում իրականացվել են հանրային քննարկումներ, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանն ուղղված լրացուցիչ միջոցառումներ:
2. Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է կատարել օրվա սահմանված ժամերին՝ 09:00-18:00, հնարավորինս նվազագույնի հասցնելով բնակելի տարածքներում աղմուկի և ճանապարհների բեռնվածությունը:
3. Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
4. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերն ու կանոնները՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարաի 2017թ. մարտի 28-ի թիվ 12-Ն հրամանի պահանջների:
5. Իրականացնել շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների պահպանմանն ուղղված մշտադիտարկում:
6. Էլեկտրահաղորդիչ գծերի, խմելու ջրի խողովակաշարի կամ այլ չնախատեսված կոմունիկացիաների հետ հատման հատվածներում շինարարական աշխատանքներն իրականացնել համապատասխան մարմինների թույլատվությամբ:
7. Անհրաժեշտ է ապահովել հայտով ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և խնամքը:
8. Պարսպապատել շինարարական հրապարակը, իսկ ներքուստ և արտաքուստ վերանորոգվող շենքերը և շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրության անթափանց թաղանթով:

02543163
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

9. Լվանալ շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերը:

10. Շինարարական աշխատանքների ժամանակ անհրաժեշտ է պատշաճ կերպով իրականացնել ջրցանման աշխատանքները, նվազագույնի հասցնելով փոշու առաջացումը:

11. Գործունեությունը սկսել միայն ինսոլացիոն դրական եզրակացություն ստանալուց հետո:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Բասիս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Երևան քաղաքի Մալաթիա Սեբաստիա վարչական շրջանի Ռաֆֆու փողոցի 28 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝ Գ. Գևորգյան

Առաջին կարգի մասնագետ՝ Վ. Ռահիսյան